ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 17

ԵՊՀ Իջևանի մասնաճուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

15-ը ապրիլի 2014թ.

Նախագահ՝ Ա. Վ. Յուցուլյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *ՈՒսումնական խորհրդատուների հաշվետվություն:*

Զեկուցող՝ Ք. Վ. Օթարյան, Է. Կ. Օսիպովա

2. *Ընդունելության համապատասխանություն աշխատաշուկային:*

Զեկուցող՝ ֆակուլտետի դեկան Ա. Յուցուլյան

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Յուցուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Յուցուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին Ա. Վ. Յուցուլյանը զեկուցման համար ձայնը տվեց ,,Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա,, մասնագիտության ուսումնական խորհրդատու Ք. Վ. Օթարյանին:

Նա ներկայացրեց, որ ավարտվել է IV ավարտական կուրսի քննաշրջանը, I և III կուրսերի I ընթացիկ ստուգումներն ու քննությունները: Իրականացվում է ուսանողների հաճախումների վերահսկողություն, դասաժամերի իրականացման, կապված ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների, քննաշրջանի, ուսումնական պրոցեսի հետ կապված բոլոր աշխատանքները: Կան ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներ, որոնց հետ ամբիոնը կամ տվյալ առարկայի դասախոսը կատարում է անհատական աշխատանք: ՈՒման բարձր առաջադիմություն ապահովելու համար ուսանողների աշխատանքի համեմատական արդյունավետության բարձրացումն է, որ անհրաժեշտություն է ուսման բարձր որակի և առաջադիմության ապահովման համար:

Այնուհետև ֆակուլտետի խորհրդի նախագահը ձայնը տվեց ,,Բնապահպանություն և բնօգտագործում,, մասնագիտության կուրսղեկ Է. Կ. Օսիպովային:

Նա ներկայացրեց ավարտական կուրսի հետ իրականացվող աշխատանքների մասին. անց է կացվել ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ. Ս. Գասպարյանը, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք ուումնական խորհրդատուների ներդրումը ֆակուլտետում բարձր գնահատեցին, քանի որ դեկանատի և ամբիոնների հետ համատեղ նրանք կատարում են իրենց պարտականությունները և առաջարկեցին նրանց կատարած աշխատանքը գնահատել ,,լավ,,:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. ,,Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա,, մասնագիտության ուսումնական խորհրդատու Ք. Վ. Օթարյանի կատարած աշխատանքը գնահատել ,,լավ,,:

2. ,,Բնապահպանություն և բնօգտագործում,, մասնագիտության ուսումնական խորհրդատու Է. Կ. Օսիպովայի կատարած աշխատանքները գնահատել ,,լավ,,:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը:

Նա ներկայացրեց, որ բազմիցս քննարկվել է ընդունելությունը աշխատաշուկային համապատասխան կազմակերպելու անհրաժեշտությունը. որի պատճառով այս տարի կատարվել է մասնագիտության փոփոխություն՝ *«Էկոլոգիական քիմիա»* մասնագիտության փոխարեն ընդունելությունը կիրականացվի *«Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության* գծով:

Ավարտելով միտքը զեկուցողը ընդգծեց, որ նշված մասնագիտությունը անհրաժեշտություն է աշխատաշուկայում և հույս հայտնեց, որ կազմակերպչական լավ աշխատանքի դեպքում կունենանք լավ դիմորդներով համալրված կուրս այդ մասնագիտությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Հավանություն տալ զեկուցողի առաջարկին:

ՆԱԽԱԳԱՀ	**Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**
ՔԱՐՏՈՒՂԱՐ	**Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**